ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԴԱ ԲԻԼԲՈՒԼՅԱՆԻ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ (ՆՈՅԵՄԲԵՐ— ՀՈՒՆՎԱՐ) ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի կատարումն 26.11.2024 թվականի նոյեմբերի 26-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 1.3 կետի ներկայացնում եմ իմ կողմից երկամսյա (երկու ամսվա) ժամկետում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի հունվարի 16-ին N 46-Ա որոշմամբ հավանության է արժանացել:

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի N 202-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի հունվարի 16-ին ընդունվել է N 43-Ն որոշմամբ:

- ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1063-Լ որոշման N 2 հավելվածի 5-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով մասնակցել եմ «Պետական գույքի կառավարման մասին» նոր օրենքի և հարակից օրենքների նախագծերի (այսուհետ

Նախագծեր) մշակման աշխատանքներին: Նախագծերը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ,

- մասնակցել եմ պետական գույքի կառավարման եռամյա ծրագրի և մասնավորեցման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունների կազմման վերաբերյալ ուղեցույցի մշակման աշխատանքներին,

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ եմ դրել ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը պետական-իրավական փորձաքննության ենթարկելու նպատակով գտնվում է ՀՀ արդարադատության նախարարությունում,

- մշակել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ եմ դրել «Պետական գույքի վարձակալության տրամադրման և վարձավճարների հաշվարկման կարգը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը պետական-իրավական փորձաքննության ենթարկելու նպատակով գտնվում է ՀՀ արդարադատության նախարարությունում:

Մշակել և Կոմիտեի նախագահի կողմից հաստատվել են հետևյալ իրավական ակտերը.

- 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 3-ի N 200-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին« N 394-Ա հրամանը,

- 2025 թվականի հունվարի 20-ի «Պետական գույքի կառավարման ոլորտում հայաստանի հանրապետության անունից պետական գույքի կառավարման կոմիտեի և

պայմանագրի կողմ հանդիսացող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերի միասնական հաշվառման մատյան վարման, փաստաթղթերի փաթեթների պահպանության և փաստաթղթերի փաթեթներն արխիվի հանձնման, ինչպես նաև պայմանագրով նախատեսված պարտավորությունների հսկողության կարգը հաստատելու մասին» N 11-Ա հրամանը:

Մասնակցել եմ պետական գույքի կառավարման ոլորտը կանոնակարգող, ինչպես նաև լիազորող նորմերի հստակեցման անհրաժեշտություն ունեցող ենթաօրենսդրական իրավական ակտերի ամբողջությամբ գույքագրման աշխատանքներին:

Պետական կառավարման մարմինների կողմից մշակված ՀՀ օրենքների, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացրել եմ առաջարկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալների և պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետի կողմից տրված բոլոր գրավոր և բանավոր հանձնարարականները:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ **ԼԻԴԱ ԲԻԼԲՈՒԼՅԱՆ**